ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ Ի
Ա Ն Ի Ա Վ Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

ՀՀ Շիրակի մարզ գ. Անիավան
ՀԵՌ. 093/40 18 76/

<< 01 >> սեպտեմբերի 2017թ.
N69

ՀՀ Շիրակի մարզպետ

պարոն Ա. Խաչատրյան

Հարգելի պարոն Խաչատրյան

Կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիավան համայնքի ավագանու թիվ 15-Ն որոշումը կայացած 2017 թվականի օգոստոսի 10-ին:

Առդիր 2 էջ:

Անիավան համայնքի ղեկավար՝ Մ. Միրոյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 9457-17
01 09 17 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ N 15-Ա

«10» օգոստոսի 2017 թվական գյուղ Անիավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ և ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-012-0018-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱԿԱՏԵՐ ՌԱԴԻԿ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ ԳԵՈՐԳՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ՔԱՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի կայարան գյուղական համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Անի կայարան գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 1993-Ն որոշման դրույթներով և հաշվի առնելով անհատ ձեռնակատեր Ռադիկ Անուշավանի Գևորգյանի դիմումը՝ համայնքի սեփականությունը համարվող հողամասում ինքնակամ կառուցված քարի վերամշակման արտադրամասի շինությունը օրինական ճանաչելու վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիավանի համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիավան համայնքի սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության 08-012-0018-0013 կադաստրային ծածկագրով հողամասի վրա (հասցե՝ Անիավան համայնք, 11-րդ փողոց, թիվ 3) անհատ ձեռնակատեր Ռադիկ Անուշավանի Գևորգյանի կողմից ինքնակամ տեղադրված քարի վերամշակման արտադրամասի շինության պահպանման ու սպասարկման համար տրամադրել 0.81583 հեկտար մակերեսով հողամաս:

2. Հողամասի սահմանված ձևին համապատասխան կազմված հատակագիծը կցվում է սույն որոշմանը:

3.Համայնքի ղեկավար Մարտիրոս Միրոյանին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով անշարժ գույքի նկատմամբ համայնքի իրավունքները ենթարկել պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

		Կողմ՝ 5	*Դեմ՝ 0*	*Ձեռնպահ՝ 0*
ՄԱՆՎԵԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ՝	կողմ	----------	----------	----------
ՄՀԵՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ՝	կողմ	----------	----------	----------
ԱՐԱՅԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ՝	կողմ	----------	----------	----------
ԱՐՍԵՆ ՆԻԿՈՅԱՆ՝	կողմ	----------	----------	----------
ՄՀԵՐ ՏՈՆՈՅԱՆ՝	կողմ	----------	----------	----------

ԱՆԻԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՐՈՅԱՆ**

<< 10>> օգոստոսի 2017 թվական
գյուղ Անիավան